

## ՏԵՐՏԵՐՅԱՆԸ ՉԱՅ ԵՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՐԱՆ

### ԳՐ. ՍԱՐԳՅԱՆ

Լինելով պրոֆեսիոնալ գրականագետ և քննադատ, Արսեն Տերտերյանը առանձնապես մեծ աշխատանք է կատարել հայ նոր գրականության պատմության ուսումնասիրության բնագավառում, ուր նրա միտքը երկար տարիներ թարթափել ու խոկացել է բազմազան պրոբլեմների շուրջը: Այդ գրականությունն իր երկու հատվածներով (արևելահայ և արևմտահայ) մշտապես եղել է գիտնականի ուշադրության կենտրոնում, և դժվար է նշել քիչ թե շատ աչքի ընկնող որևէ հայ գրող, որին մեկ կամ մի քանի անգամ անդրադարձած չլինի նա: Մեր գրապատմական զարգացման պրոցեսն իր հիմնական փուլերով ու առաջատար միտումներով, ժանրային ու ոճական շատ դրսևորումներով լուսաբանվել ու գնահատվել է նրա երկերում:

Տերտերյանն առաջիններից էր, որ գրական փաստերի ուսումնասիրության հիման վրա որոշեց մեր դասական գրողներից շատերի ստեղծագործության էությունը և գիտականորեն սահմանեց նրանցից յուրաքանչյուրի տեղը գրական շարժման շղթայում: Ըստ որում նրան հավասարապես հետաքրքրել է թե՛ բանաստեղծը և թե՛ արձակագիրը, թե՛ դրամատուրգը և թե՛ հրապարակախոսը, որոնց երկերի հմտալից վերլուծությամբ բացահայտել է ոչ միայն տվյալ հեղինակի աշխարհայացքի ու մեթոդի բնորոշ գծերը, այլև այն ընդհանուրը, որ հատուկ է մեր հոգևոր կյանքին: Այլ կերպ ասած՝ առանձին հեղինակների ստեղծագործության ուսումնասիրությամբ Տերտերյանը ձգտում էր լուսաբանել հայ գեղարվեստական խոսքի զարգացման պրոցեսը, ի հայտ բերել նրա ներքին օրինաչափությունները:

Այդ իմաստով ուշագրավ են տակավին նախաստվետական շրջանում Տերտերյանի գրած մենագրական ուսումնասիրություններն իրարից տարբեր այնպիսի հեղինակների մասին, ինչպիսիք են Տերյանը և Նալբանդյանը, Թամանյանը և Ծիրվանզադեն, Հովհաննիսյանը և Մուրացանը... Ճիշտ է, գրականագետի խոսքը ոչ միշտ էր հիմնավոր ու համոզիչ, բայց անժխտելի է նրա ջերմ սերը դեպի հայրենի գրականությունը, որի առաջատար դեմքերը դառնում էին նրա համար մտառու ֆենադկման նյութ:

Զափազանցություն չի լինի, եթե ասենք, որ մինչև Տերտերյանը և նրանից հետո էլ ոչ մի հայ գրականագետ մեր նոր գրականության ուսումնասիրության բնագավառում այնքան նպատակասլաց ու արդյունավետ գործունեություն չի ունեցել, որքան նա: Օժտված լինելով ֆենեյու, դատելու, վերլուծելու բացառիկ կարողությամբ, գեղագիտական բարձր ճաշակով՝ Տերտերյանը հենց սկզբից դրսևորել է լայն հետաքրքրություն և գրական երևույթների սուր ըմբռնողություն: Ճիշտ է, սկզբնապես նա խորացել է իր նախասի-

րած հեղինակների ուսումնասիրության մեջ, բայց հետո, աստիճանաբար, ընդլայնել է իր հետազոտական աշխատանքի շրջանակները՝ ուսումնասիրության ոլորտի մեջ առնելով ժամանակակից գրողներին:

Գրան զգալիորեն նպաստել է այն հանգամանքը, որ գրականության պատմաբան լինելուց առաջ Տերտերյանը հանդես է եկել որպես գրական ֆննադատ և կարճ ժամանակամիջոցում, ինչպես վկայում են ժամանակակիցները, նվաճել հեղինակություն. «Մի քանի տարվա ընթացքում նա դարձավ մեր ամենահամբավավոր քննադատներից մեկը,— գրել է Գրասերը (Յ. Խանդադյանը) 1913 թ.,— ինչ վերաբերում է նրա գրչի բեղմնավորությանը, յապա այդ տեսակետից մեր քննադատն իրան հավասարը չունի մեր քննադատական գրականության մեջ»<sup>1</sup>:

Եվ, արդարև, բեղուն էր երիտասարդ քննադատի գրիչը, վարակիչ նրա խոսքը: Նույն Գրասերը խոստովանում է, որ Տերտերյանը «կարդացվում է մեզանում և արժանանում ուշադրությանը»: Անշուշտ դրա պատճառն այն չէր միայն, որ Տերտերյանը հայերենին տիրապետող հեղինակն էր, այլև այն, որ նա «գրականագիտական անտարակուսելի ընդունակությամբ և գեղարվեստական ճաշակով օժտված քննադատ»<sup>2</sup> էր:

Ուշադիր հետևելով ժամանակակից գրական շարժմանը՝ Տերտերյանն ակտիվորեն միջամտում էր նրա ընթացքին, գրական երևույթները քննում ու գրնահատում նոր հայեցակետից:

Ամենևին պատահական չէ, որ իր գրաքննադատական գործունեության առաջին իսկ քայլերից Տերտերյանը հակադրվեց մեր քննադատության մեջ իշխող այն հին սկզբունքներին, որ ժամանակին վահան Տերյանը որակել է որպես «ազգային-ուտիլիտարիստական մեթոդ»<sup>3</sup>: Հենց այդ մեթոդի և նրա ներկայացուցիչների դեմ էր ծառանում Տերտերյանը, ցույց տալով նրանց կուպիտ ու սուբյեկտիվ վերաբերմունքը գրականության և գրողների նկատմամբ: Մասնավորապես խիստ էր նա դեպի Լեոն, որն անտեղի հարձակումներ էր գործում մեր գրականության նշանավոր վարպետների վրա, փորձելով արժեքազրկել նրանց վաստակը: Այդ գրողների անունն ու գործն էր պաշտպանում Տերտերյանը, սուր բանակոխիվ սկսելով գեղարվեստի յուրահատկությունն արհամարհող, միտումնավոր քննադատության դեմ: Առանձնապես մեծ է ու նրշանակալի նրա ծառայությունը, իր խոսքերով ասած՝ այնպիսի «մոռուցված ու լքված» գրողների գնահատության խնդրում, ինչպիսիք են Մուրացյանը և Նար-Գոսը: Առաջին անգամ Տերտերյանն էր, որ հակառակ «թայֆայական միտումների» ու «անարգ նեղսրտության»<sup>4</sup> հանգամանակից ուսումնասիրեց նշված հեղինակների ստեղծագործությունը և վեր հանեց նրանց վաստակի գաղափարագեղարվեստական արժանիքները: Դրանով նա մեծապես նպաստեց թե՛ մեկի և թե՛ մյուսի հռչակի տարածմանը:

Ժամանակակից հեղինակների մասին խոսելիս, նրանց գործերը վերլուծելիս Տերտերյանը դրանք սովորաբար դիտում ու արժեքավորում էր անցյալի ավանդների հետ ունեցած կապի մեջ: Քննադատի միտքն ավելի խոր էր ակուսում բոլոր այն դեպքերում, երբ անդրադառնում էր տվյալ հեղինակի գրա-

1 «Բարձի ձայն», 1913, № 123:

2 Նույն տեղում:

3 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1961, էջ 262:

4 Ա. Տերտերյան, Մուրացյանը որպես մտածող և գեղագետ, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 10:

կան ուսումնառութեանը, նրա կրած ու թողած ազդեցութիւններին: Նման պարագաներում առավել ցայտունութեամբ էր դրսևորվում նրա քաջատեղյակութունը ոչ միայն հայ, այլև ուրիշ ժողովուրդների գրականութեան պատմութեան ընթացքին:

Եվ իսկապես, Տերտերյանի, որպէս գրականագետի, բնորոշ գծերից մեկն այն էր, որ նա քաջատեղյակ էր ուսուս և համաշխարհային գրականութեանը, գեղարվեստական մշակույթի զարգացման պատմութեանը և կարողանում էր մեր գրական արժեքները դիտել ու գնահատել միջազգային առաջընթացի ֆոնի վրա:

Պա նկատելի է մասնավորապէս գրականութեան պատմութեան հարցեր շոշափող նրա աշխատութիւններում, որոնք մեծ մասամբ գրված են սովետական տարիներին: Միանգամայն օրինաշատ է, որ հենց այս շրջանում Տերտերյանը ձևավորվեց որպէս հայ նոր գրականութեան հմուտ պատմաբան: Պրանում էական դեր խաղաց Երևանի պետական համալսարանը, որը սկզբից և՛ հանգրվան դարձավ նրա գիտական գործունեութեան համար:

Լինելով նորաբաց համալսարանի հիմնադիր դասախոսներից մեկը՝ Տերտերյանը, բնականաբար, պէտք է մտահոգվեր իր վարած դասընթացի՝ հայ նոր գրականութեան պատմութիւնն առարկայի ծրագիր և ձեռնարկ կազմելու խնդիրներով: Եվ դա հատկապէս այն պատճառով, որ անցյալում ստեղծված ձեռնարկները (Լեո, Մանվելյան, Փափազյան և այլն) թե՛ իրենց բովանդակած նյութերով և թե՛, մանավանդ, մեթոդաբանական սկզբունքներով չէին կարող բավարարել նոր, սովետական բարձրագույն դպրոցի պահանջները: Հարկավոր էր ուսանողութեանն ապահովել անհրաժեշտ նոր դասագրքերով ու ձեռնարկներով: Այդ գործին ձեռնամուխ եղավ նաև Տերտերյանը, որն արդեն ունենէր մասնավորժական աշխատանքի հարուստ փորձ և տաղանդավոր գրականագետի համբավ:

Եվ ահա 1922 թվականին, ի շարս ուրիշ դասագրքերի ու ձեռնարկների, ձեռագրի իրավունքով լույս տեսավ նաև Ա. Տերտերյանի «Հայոց նոր գրականութիւն (համառոտ դասընթաց)» վերնագրով աշխատութիւնը: Վերջինս ավելի շուտ մեթոդական ուղեցույց էր կամ, ինչպէս հեղինակն է անվանել՝ «կոնսպեկտ» տվյալ դասընթացի վերաբերյալ: Եվ շնայած դրան, այն ուշագրավ փորձ էր հայ նոր գրականութեան պատմութեան բուհական ձեռնարկ ստեղծելու ճանապարհին:

Ակնհայտ է, որ այստեղ Տերտերյանը ձգտում էր նոր տեսանկյունից ներկայացնել մեր գրականութեան պատմութեան նոր շրջանի սկզբնավորումը և այդ առնչութեամբ արծարծել սկզբունքային նշանակութիւն ունեցող մի քանի հարցեր: Այդ իմաստով լուրջ հետաքրքրութիւն է ներկայացնում աշխատութեան առաջին պարագրաֆը, որ վերնագրված է «Նյութը և մեթոդը»: Տերտերյանը հայոց նոր գրականութիւնը ըստ գրական տեսակի բաժանում է երեք մասի՝ վիպագրութիւն, բանաստեղծութիւն և հրատարակախոսութիւն: Նա իր շարադրանքն սկսում է վիպագրութիւնից, «նկատի առնելով այն հանգամանքը, — ասում է գրականագետը, — որ նա միջնաշխարհի ծնունդ է, իսկ մյուս տեսակները գաղութային ծագում ունեն»<sup>5</sup>:

Այստեղից հետևում է, որ Տերտերյանը նույնպէս սկզբում պաշտպանում էր այն հայեցակետը, թէ հայ վիպագրութիւնը հանձինս Աբովյանի և նրա

<sup>5</sup> Ա. Տերտերյան, Հայոց նոր գրականութիւն (համառոտ դասընթաց), Երևան, 1922, էջ 3:

հետևորդների, սկզբնավորվել է միջնաշխարհում կամ, ինչպես ընդունված է ասել՝ բնաշխարհում, իսկ մեր բանաստեղծությունն ու հրապարակախոսությունը ծնունդ են առել գաղթաշխարհում: Այնտեղ են ապրել ու ստեղծագործել նալբանդյանը, Պատկանյանը, Շահազիզը, Նազարյանը և մյուս բանաստեղծներն ու հրապարակախոսները, որոնց երկերում իբր պակասում է բրնաշխարհի շունչն ու ոգին:

Ավելի հետաքրքրական է Տերտերյանի այն դիտողությունը, թե հրապարակախոսությունը թեև «գեղեցիկ գրականության չէ պատկանում, բայց մեր գրականության առանձնահատկությանը շնորհիվ նա սերտ առնչություն ունի մյուս ճյուղերի հետ»<sup>6</sup>: Այդ պատճառով էլ ինչպես առաջ, այնպես էլ հետո նա զբաղվել է նաև հայ հրապարակախոսների ուսումնասիրությամբ, նպատակ ունենալով ցույց տալու մեր հրապարակախոսության ու գրականության միջև եղած կապը, որ արտահայտվել է ամենատարբեր ձևերով: Տերտերյանը նկատի ուներ այն հանգամանքը, որ սկսած անցյալ դարի 60-ական թվականներից մեր գրականությունը զարգացել է գլխավորապես մամուլի էջերում, ուստի և ավել կամ պակաս շահով կրել է հրապարակախոսության ազդեցությունը: Հիշենք թեևուզ «Հյուսիսափայլը», «Մշակը», «Մուրճը» և ուրիշ պարբերականներ, որոնց խմբագիր-հրապարակախոսները անշուշտ որոշակիորեն ներգործել են տվյալ շրջանի հայ գրողների և գրական շարժման վրա:

Պակաս հետաքրքրական չէ Տերտերյանի մեկ ուրիշ դիտողությունը. ընդունելով, որ գրականությունը ժողովրդի պատկերավոր մտածողությունն է՝ նա հայտնում է, որ ինքը «պետք է ուսումնասիրի ոչ թե գրքեր ու հեղինակներ, այլ գաղափարները և նրանց գեղարվեստական ձևերը»<sup>7</sup>: Ուրիշ խոսքով ասած՝ նա կամենում է զբաղվել ոչ թե գրքերի պատմությամբ, այլ հասարակական գաղափարների և նրանց գեղարվեստական ձևավորման ուսումնասիրությամբ: Բայց սա, իհարկե, չի նշանակում, թե գրականագետը անտեսում է հեղինակներին, որովհետև նրա իսկ կարծիքով՝ «տաղանդը պետք է հանդիսանա այն կենտրոնը, որի շուրջը խմբվել է այս կամ այն սոցիալական ամբողջի «մտածողությունը»:

Ելնելով դրանից, Տերտերյանը գրողին մոտենում է գրական-պատմական տեսանկյունից. «Միջավայրը, դարը, ժամանակը, որպես օբյեկտիվ տվյալ, — ասում է նա, — իսկ հեղինակի անհատականությունը որպես սուբյեկտիվ տվյալ. երկուսի հարակցությունը տալիս է գրական երկի երևույթը»<sup>8</sup>:

Այսպես, ուրեմն, գրական երկի ծնունդը Տերտերյանը դիտում է որպես արդյունք ժամանակի ու միջավայրի հետ գրողի ունեցած կապի կամ հարակցության: Այստեղից էլ հետևում է նրա մի այլ կարևոր պահանջը՝ գրողը, ժամանակը և երկը քննել սերտ միասնության մեջ, գլխավոր ուշադրությունը բեռնելով, իհարկե, երկի վրա: Ժամանակն ու միջավայրը Տերտերյանին հետաքրքրում են այն շահով, որշահով դրանք պայմանավորում են գրողի հոգևոր ծնունդը և արգասավորում նրա ստեղծագործական միտքը: Այդ պատճառով էլ հեղինակի անհատականությունը, նրա կարծիքով, հարկավոր է ուսումնասիրել հետևյալ հաջորդականությամբ. «...կյանքը, աշխարհայացքը, գեղեցիկը և կրած ազդեցությունները»<sup>9</sup>,

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Նույն տեղում:

Նկատի ունենալով, որ հայոց նոր գրականությունը անցյալում որոշ շահով ուսումնասիրվել է և եղած ձեռնարկներում պարզաբանված են գրողների կենսագրությունները, տրված են նրանց երկերի բովանդակությունը, Տերտերյանը սույն դասընթացի մեջ գերադասում է լուսաբանել իրեն զբաղեցնող հեղինակների միայն աշխարհայացքը, որոշել գեղեցիկի բնույթը և ցույց տալ նրանց կրած ազդեցությունները հայ և օտար գրականություններից<sup>10</sup>։

Անցողակիորեն նկատենք, որ հենց այդ եղանակով էլ Տերտերյանը հետազայում ուսումնասիրել է մեր դասական գրողներին։

Անդրադառնալով տվյալ դեպքում իր նյութի ուսումնասիրության մեթոդին՝ Տերտերյանը հայտնում է, որ ինքը մեր գրականության պատմությունը հետազոտելու է ըստ շվոլաների (իր արտահայտությունն է)։ «Որ կարևոր է նախ՝ նյութի համակարգության և երկրորդ՝ գրական խնդիրների մասին հատուկ գաղափար տալու և կրկնողություններից խուսափելու համար»<sup>11</sup>, — ասում է նա։

Ըստ այդմ մեր նոր գրականության զարգացման ընթացքի մեջ նա նշում է հետևյալ դպրոցները.

ա) «Գեղջկական դպրոց», որի հիմնադիրը համարում է Արովյանին, իսկ սրա աշակերտներ՝ Պոռոչյանին և Աղայանին.

բ) ռոմանտիկ դպրոց, որի հիմնադիրը համարում է Րաֆֆուն, իսկ հետևորդներ՝ Մուրացանին, Մերենցին, Վրթ. Փափազյանին.

գ) ռևալիստական դպրոց, որի հիմնադիրը համարում է Շիրվանզադեին։

Նշված դպրոցների և դրանց ներկայացուցիչների բնութագրմանն են նըվիրված շարադրանքի հետագա էջերը, ուր ակնհայտորեն դրսևորվել է գրական պրոցեսի մեջ թափանցելու և այն մեկնաբանելու Տերտերյանի արտակարգ ընդունակությունը։ Կատարելապես տիրապետելով նյութին՝ նա կարողացել է համադրել ու վերլուծել զրական փաստերը, հանգել նոր ու հետաքրքիր ընդհանրացումների, որոնց քննությունը մեր նպատակից դուրս է։ Կուզենայինք միայն ընդգծել, որ Տերտերյանի կատարած այս առաջին քայլը գրականության պատմության ուսումնասիրության բնագավառում տեղի ունեցավ մի այնպիսի ժամանակ, երբ ինչպես ամենուրեք, այնպես էլ մեզանում ժխտական վերաբերմունք էր ստեղծվել անցյալի ժառանգության նկատմամբ։ Նման պայմաններում զբաղվել գրականության պատմության հարցերով և նույնիսկ գրել հայ նոր գրականության դասընթաց, նշանակում է ունենալ գիտական համոզվածություն և քաղաքացիական արիություն՝ տիրող մտայնությանը հակադրվելու համար։ Տերտերյանն ուներ և՛ մեկը, և՛ մյուսը։ Ուստի և համարձակություն ունեցավ խոսելու Արովյանի և նրա հերոսի «գեմոկրատական համոզմունքների» ու հայրենասիրության մասին, Րաֆֆուն բնութագրելու որպես «ազգության վիպասան», նշելու, որ նրա «աշխարհայացքը շեշտուն ազատագրական» է և որ նա հմայված էր Նալբանդյանով։

Մրանք այսօր, իհարկե, անառարկելի ճշմարտություններ են, բայց այն ժամանակ շատերին թվում էին կասկածելի և նույնիսկ վտանգավոր...

Չնայած ծավալվող «ձախտության մանկական հիվանդությանը», Տերտերյանը համառորեն շարունակում էր ուսումնասիրել հայ նոր գրականության պատմությունը, հրապարակ հանելով նրա տարբեր էջերին վերաբերող ար-

<sup>10</sup> Նույն տեղում։

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 4։

ժեքավոր աշխատություններ: Հիշենք թեկուզ «Նկատողություններ Ռաֆֆիի մասին» (1921—22 թթ.), «Մեծ քաղաքի արվարձանը Նար-Գոսի երկերում» (1926), «Նկատողություններ մեր գյուղագիրների մասին» (1927), «Լալվարի որսի» գրական-հասարակական արժեքը», «Մերենց», «Նալբանդյանի գրական հայացքները» (1929), «Ջավախեցին իբրև գյուղագիր» (1930) և այլն:

Ճիշտ է, դրանք ևս այս ու այն շափով կրում են ժամանակի կնիքը, բայց և այնպես թարմ խոսք էին անցյալի գրականության մեկնաբանման ու արժեքավորման ասպարեզում: Եվ այստեղ էականն այն է, որ Տերտերյանն աշխատում էր շահմանափակվել միայն հայտնի դեմքերով, այլև ուսումնասիրել ստեղծագործությունը նաև պակաս նշանավոր հեղինակների (Վ. Միրաբյան, Ջավախեցի), որոնք պատմական որոշ դեր են կատարել և ամբողջացնում են տվյալ շրջանի գրականության համալսարանական կերպը:

Խորամուխ լինելով անցյալի հայ գրողների ստեղծագործության ուսումնասիրության մեջ՝ Տերտերյանը նպատակ ուներ ոչ միայն հետաքրքրություն ու սեր արթնացնելու դեպի դասական ժառանգությունը, այլև նախապատրաստվելու մեծ գործի՝ բնութագրելու հայ նոր գրականության զարգացման հիմնական փուլերը և տալու այդ գրականության պատմության համակարգված շարադրանքը, որ եղել է նրա փայփայած երազանքը:

Այդ ուղղությամբ, անշուշտ, նոր և կարևոր քայլ էր նրա «Հայոց նոր գրականության պատմություն. XIX—XX դդ.» առաջադրությունների շարքը, որ լույս տեսավ 1930—31 թթ.:

Պատմագրական բաժնի ուսանողների համար գրված այդ առաջադրությունները, որոնց թիվը հասնում է 16-ի և որոնք կարող են կազմել մի ամբողջ հատոր, ըստ էության մեր նոր գրականության պատմության համալսարանական դասընթացի առաջին ծավալուն շարադրանքն է սովետական շրջանում: Դրանց մեջ ներհուն հեղինակը, ի տարբերություն նախորդների (Լևո, Փափազյան, Մանվելյան և այլք), երկու հատվածների գեղարվեստական զարգացումը ներկայացրել է որպես մեկ միասնական ամբողջություն իր բնորոշ գծերով: Դրապատմական զարգացման միևնույն պրոցեսի ընդհանուր ֆոնի վրա նա գծել է դիմաստվերներն այնպիսի հեղինակների, ինչպիսիք են Աբովյանը, Պոռշյանը, Աղայանը, Նալբանդյանը, Պատկանյանը, Շահազիզը, Ռաֆֆին, Մուրացանը, Նար-Գոսը, Փափազյանը, Մերենցը, Տյուսաբը, Պարոնյանը, Շիրվանզադեն, Հովհաննիսյանը, Թումանյանը և «Գուգարքի երգիչները» (Աղայան, Միրաբյան):

Նկատենք նաև, որ Տերտերյանը գրողին դիտում էր ոչ թե մեկուսի, առանձնության մեջ, այլ որպես ժամանակի ու միջավայրի հարազատ արտահայտություն, որպես կոնկրետ հոսանքի կամ դպրոցի ներկայացուցիչ: Այդ են վկայում նաև առաջադրություններից մի քանիսի վերնագրերը՝ «Աբովյանի գրական դպրոցը և Պ. Պոռշյանը», «Սրբուհի Տյուսաբը և «ռոմանտիկ ոճի» խնդիրը», «Արևելահայ լիբերալիզմը և ռեալական արվեստը» և այլն:

Իհարկե, միշտ չէ, որ գրականության պատմաբանը գտնում էր հաջող վերնագրեր, բայց տվյալ դեպքում դա չէ կարևորը, այլ այն նոր մոտեցումը, որով նա աշխատում էր քննատել նշված հեղինակներին: Օգտագործելով իր նախորդների փորձը, ինչպես և իր իսկ ուսումնասիրությունների արդյունքները, Տերտերյանն այստեղ գրականության պատմության պրոցեսը քննում ու մեկնաբանում է ժողովրդի կյանքի ու պայքարի հետ ունեցած կապի տեսանկյունից և ըստ այդմ արժեքավորում նրա լուրաքանչյուր երևույթ:

Դրա հետ միաժամանակ նա քննութեան է առնում տվյալ գրողի սոցիալ-քաղաքական հայացքները, դրանցով պայմանավորված նրա էսթետիկական ըմբռնումները, կրած ու թողած ազդեցությունները և այլն:

Այդ ամենով հանդերձ առաջադրությունների հեղինակն զգալի տուրք է տվել գեհնիկ սոցիոլոգիզմին, որը և կաշկանդել է նրա մտքի թռիչքն ու վերլուծական հնարավորությունը: Տարվելով սոցիոլոգիական վերլուծությամբ՝ Տերտերյանը հաճախ անտեսել կամ մոռացել է, որ գործ ունի գրողի, խոսքի վարպետի հետ, որի ստեղծագործության քննությունը պահանջում է թափանցել զեղարվեստական ձևի ոլորտը, նրա տարրերի մեջ, որոնցից դուրս չկա արվեստի երկը և շի կարող արտահայտվել որևէ բովանդակություն: Ծիշտ է, առանձին դեպքերում կոնկրետ նյութի վերլուծության ժամանակ մերթընդմերթ փայլատակում է բարձրաճաշակ գրականագետի խորաթափանց միտքը. նա ուշագրավ դիտողություններ է անում այս կամ այն հեղինակի աշխարհայացքի հակասության, ստեղծագործական մեթոդի էության, երկերի զեղարվեստական հյուսվածքի մասին, բայց, այնուամենայնիվ, առաջադրությունների համար բնորոշը կոպիտ, սոցիոլոգիական սխեմաների գործադրությունն է: Դրա հետևանքով էլ մեծապես տուժել են ոչ միայն մեր ազատագրական պայքարի երգիչները (Գամառ Քաթիպա, Բաֆֆի և ուրիշներ), այլև նույնիսկ Թումանյանը և Շիրվանզադեն: Վերջինս, օրինակ, նրա կարծիքով զեկավարվել է արևելահայ լիբերալիզմի և նրա բերան հանդիսացող Արծրունու հրապարակախոսությամբ, որի ազդեցությունը տեսնում է նաև գրողի լեզվի ու ոճի վրա: Իսկ Թումանյանին բնութագրում է որպես «մեր գյուղացիական գրականության ամենախոշոր դեմք», որին իբր «ավելի հաջողվում է պատմել և նկարագրել, քան տալ իր զգացումները» և որն իբր «տուրք է տվել մարտական նացիոնալիզմին»:

Պարզ է, որ նման գեհնիկ ու սխալ բնութագրումները, որ արդյունք էին տիրող պատմասոցիոլոգիական մտայնության ազդեցության, դժվար է համատեղել հենց իր՝ Տերտերյանի այն ճիշտ գնահատականների հետ, որ տվել էր նա մոտիկ անցյալում:

Այսուհանդերձ, առաջադրությունները ժամանակին գրական դեր խաղացին ոչ միայն ուսանող երիտասարդությանը գրական գիտելիքներով զինելու, այլև մեր գրականության նկատմամբ հասարակական հետաքրքրություն առաջացնելու գործում:

30-ական թթ. կեսերից բուռն վերելք սկսվեց Տերտերյանի ստեղծագործական կյանքում: Դրանում վճռական դեր խաղաց մեր կուսակցության կողմից գեհնիկ սոցիոլոգիզմի դատապարտումն ու հաղթահարումը, որը լայն հորիզոններ բացեց նաև գրականության պատմության ուսումնասիրության համար: Փոխվեց վերաբերմունքը դեպի դասական ժառանգությունը և վերջինիս նորովի մեկնաբանությունն ու գնահատությունը դարձան գրականագիտության առաջնահերթ խնդիրները:

Տերտերյանը, որպես նորի զգացմամբ օժտված առաջավոր գիտնական, բուռն թափով շարունակեց հայ գրականության պատմության դրվագների ուսումնասիրությունը: Ոգեշնչված հայ դասականների երկերի վերահրատարակության փաստով՝ նա գրեց մի ամբողջ շարք առաջաբաններ, որոնք ցույց են տալիս գրականագետի հայացքների մեջ առաջացած այն նոր բեկումը, որ արդյունք էր մեր կյանքում կատարված արմատական տեղաշարժերի: «Նար-Դոսի պատմվածքները», «Հ. Պարոնյանի «Քաղաքավարության վնասները»

(1934), «Մուրացանը իբրև գյուղագիր», «Մուրացանի «Լուսավորության կենտրոնը», «Մուրացանի պատմվածքները» (1936), «Երվանդ Օտյանի ստեղծագործությունը» (1937),— ահա այդ բեկման առաջին ցուլքերը, որոնք լույս էին արձակում մեր գրապատմական պրոցեսի մոտիկ ու հեռու ծալքերին:

Այդ նոր և բարենպաստ ժամանակի ծնունդ էր նաև Տերտերյանի սղագրված դասախոսությունների այն շարքը, որ լույս տեսավ 1938—39 թթ. «Հայոց նոր գրականության պատմություն: 19—20-րդ դդ.» խորագրով:

Ութ պրակից բաղկացած այս շարքը համոզիչ կերպով ցույց է տալիս Տերտերյանի գրապատմական կոնցեպցիայի զարգացման վերընթաց ուղին: Ասես սար բարձրացող մարդու նման նա քանի առաջ էր գնում, այնքան ընդարձակվում էր հորիզոնը և ավելի տեսանելի էին դառնում փոքր ու մեծ լեռնագագաթները: Ահա թե ինչու նա այժմ ավելի հստակորեն էր տեսնում Փափազյանի, Հովհաննիսյանի, Թումանյանի և այլոց ստեղծագործական նկարագիրը, որ մի քանի տարի առաջ ոչ ճիշտ մեկնաբանություն էր ստացել նրա առաջնորդություններում:

Չմոռանանք նշել նաև, որ այս անգամ Տերտերյանը հատուկ ուշադրության էր արժանացրել այնպիսի հեղինակների (Մատուրյան, Իսահակյան, Կուրդինյան, Հակոբյան), որոնց անցյալում կամ բոլորովին չէր անդրադարձել և կամ հիշել էր միայն անցողակիորեն:

Դրան պետք է ավելացնել և այն, որ այստեղ Տերտերյանը պահպանել է հաջորդականության սկզբունքը, որի շնորհիվ կարողացել է բացահայտել նախորդ և հաջորդ հեղինակների միջև եղած կապը, ցույց տալ, թե ինչպես առաջինը ճանապարհ է հարթում երկրորդի համար:

Մենք գիտակցաբար ծանրացանք Տերտերյանի այն աշխատությունների վրա, որոնք անմիջականորեն վերաբերում են հայ գրականության պատմությանը և տալիս են նրա զարգացման ուրվագիծը: Բայց սա չի նշանակում, թե այդ իմաստով նվազ հետաքրքրական են նրա այնպիսի հիմնարար երկեր, ինչպիսիք են «Արովյանի ստեղծագործությունը», «Պերճ Պոռչյան», «Ալիշանը և հայրենասիրությունը», «Պարոնյանի գեղագիտական հայացքները», «Շիրվանզադեի գրական տիպերի հանրագիտարանը» և այլն:

Ինչպես այդ, այնպես էլ նրա մյուս մենագրություններում կարելի է գրտնել հայ գրականության պատմության ընթացքը լուսաբանող բազմաթիվ էջեր: Դրանց համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե որքան լայն է Տերտերյանի ընդգրկումը և ինչքան խորաթափանց նրա հայացքը:

Տերտերյանի, իբրև հայ նոր գրականության պատմաբանի, մեծագույն երախտիքը նաև մեր գրականության ժանրային հարստությունը, գրական ուղղությունները ուսումնասիրելու և տեսականորեն ընդհանրացնելու մեջ է:

Ինչպես անցյալում, այնպես էլ հետագայում՝ սովետական տարիներին նա իր ուշադրության կենտրոնում միշտ էլ ունեցել է հայ նոր պոեզիայի նըշանավոր ներկայացուցիչներին, որոնց ստեղծագործության վերլուծությամբ վեր է հանել մեր շափածո խոսքի զարգացման ընթացքը՝ Ալիշանից մինչև Տերյան... Դա հիրավի վիթխարի աշխատանք է, որի ընթացքում Տերտերյանն իրեն հատուկ հմտությամբ լուսաբանել է հայ բանաստեղծության գաղափարական հարստությունն ու գեղարվեստական ձևերի բազմազանությունը:

Գալով հայ գեղարվեստական արձակի, մասնավորապես վիպասանության ուսումնասիրությանը, պետք է նկատել, որ այդ մարդում ևս նշանակալի է Տերտերյանի վաստակը: Բավական է ասել, որ միայն սովետական շրջանում



նա բազմիցս անդրադարձել է այնպիսի հեղինակների ստեղծագործության, ինչպիսիք են Աբովյանը, Պոռոչյանը, Աղայանը, Բաֆֆին, Շիրվանզադեն, Մուրացանը, Նար-Պոսը, Օսյանը և ուրիշներ, որոնց վեպերի խորագրերն են նույնպես ուրվագծել է հայ վիպասանության զարգացման ուղին:

Առանձնապես պետք է ընդգծել այն արդյունավետ աշխատանքը, որ կատարել է նա հայ պատմավեպի տեսության ու պատմության մշակման ուղղությամբ: «Վերք Հայաստանի», «Երկունք», «Սամվել», «Գևորգ Մարզպետունի», ինչպես և սովետահայ առաջին պատմավեպերի («Վարդանանք», «Պապ թագավոր») ուսումնասիրությամբ նա բացահայտել է դրանց հեղինակների պատմահայեցողական բնույթն ու ստեղծագործական մեթոդի յուրահատկությունը: Հատկապես բարձրարժեք գործ է «Բաֆֆու «Սամվել» պատմական վեպը» ուսումնասիրությունը (1940 թ.), որը մինչև այսօր էլ մնում է շգնբազանցված:

Տերտերյանն էր, որ առաջին անգամ զբաղվեց անցյալ դարավերջի և ընթացիկ դարասկզբի հայ գյուղը պատկերող արձակագիրների կամ, ինչպես ընդունված է ասել՝ գյուղագիրների ուսումնասիրությամբ: Այդ տեսակետից հիշարժան է «Նկատողություններ մեր գյուղագիրների մասին» (1927 թ.) աշխատությունը, ուր համոզիչ կերպով բացահայտված են տասնյակից ավելի հեղինակների աշխարհայացքն ու ստեղծագործական առանձնահատկությունները:

Տերտերյանն էր դարձյալ, որ մեծ եռանդով ու վարպետությամբ ուսումնասիրեց հայ երգիծական գրականությունը՝ Պարոնյանից մինչև Տմբլաչի Խաչան: Տեղին է նշել, որ նա առանձնապես շատ է սիրել ու գնահատել անմահ Պարոնյանին և նրա ստեղծագործությանն անդրադարձել է մի քանի անգամ՝ իր վերլուծական մտքի լուսարձակի տակ առնելով նրա երգիծանքի անծանոթ խորշերը:

Լինելով վերին աստիճանի նրբանկատ գրական երևույթները քննելիս, Տերտերյանը երգիծանքի տարրեր բացահայտել է նույնիսկ այնպիսի հեղինակների մոտ, որոնք առաջին հայացքից թվում է կապ չունեն երգիծաբանության հետ: Մենք նկատի ունենք Աբովյանին, Պոռոչյանին, Բաֆֆուն, Շիրվանզադեին և էլի մի քանի գրողների, որոնց ստեղծագործությունները վերլուծելիս գրականության պատմաբանը հմտորեն ցույց է տվել յուրաքանչյուրի երգիծական շիղը: Այդ առումով առանձնապես հետաքրքրական է «Շիրվանզադեի երգիծական տիպերը» վերնագրով ուսումնասիրությունը, որը, անշուշտ, խորաթափանց դիտարկումների արդյունք է:

Տերտերյանի ուշադրությունից չի վրիպել նաև հայ քառերգությունը: Սունդուկյանի և Պարոնյանի կատակերգությունները, Շիրվանզադեի և Փափազյանի դրամատիկական երկերը, ինչպես և Մուրացանի «Ռուզան» ու Շանթի «Հին աստվածները», խոր ու բազմակողմանի վերլուծության են ենթարկվել նրա գրչի տակ: Նրան հաջողվել է բացահայտել հայ դրամատուրգիայի գաղափարական միտումներն ու գեղարվեստական ձևերի հարստությունը, որը մինչ այդ ոչ ոք չէր արել:

Հայ դասականների գեղագիտական ժառանգության ուսումնասիրությունը ևս կապված է Տերտերյանի անվան հետ: Գրականության պատմաբանին հատուկ խորաթափանցությամբ նա հետազոտել է ու գիտականորեն մեկնաբանել հայ գեղագիտական մտքի զարգացման նոր շրջափուլը: Այդ իմաստով

բարձրարժեք գործեր են «Նալբանդյանի էսթետիկան» (1939) և մանավանդ «Պարոնյանի գեղագիտական հայացքները» (1941), որոնցում որոշ չափով տրված է նաև տվյալ ժամանակաշրջանի հայ գրականագիտական մտքի տեսությունը:

Տերտերյանին ենք պարտական նաև հայկական ռեալիզմի և ռոմանտիզմի շատ կողմերի բացահայտման ու լուսարանման համար: Նա էր, որ տասնամյակներ առաջ գրական երկերի ու փաստերի բազմակողմանի ուսումնասիրությամբ հանգեց այն հիմնարար հետևություն, թե «ռեալիզմն ու ռոմանտիզմը գուզընթաց են զարգացել մեր նոր գրականության պատմության մեջ»<sup>12</sup>:

Հստ ամենայնի բարձր գնահատելով ռեալիստական գրական ուղղությունը՝ Տերտերյանն իրեն հատուկ խորաթափանցությունամբ ուսումնասիրեց ու հիմնավորեց այդ մեթոդի զարգացման ընթացքը Պոռոյանի, Աղայանի, Սունդուկյանի, Պարոնյանի երկերում, որտեղ գնալով ավելի ու ավելի էր խորանում սոցիալական պրոբլեմատիկան և ավելի հստակորեն էր դրսևորվում հեղինակային դիրքորոշումը: Ավելին, նա ցույց տվեց, որ ռեալիզմը մեղանում զարգացման նոր և առավել բարձր աստիճանի հասավ անցյալ դարավերջին և մեր դարասկզբին հանձինս Շիրվանզադեի և Զոհրապի, Թումանյանի և Օտյանի ստեղծագործությունների:

Ինչ վերաբերում է ռոմանտիզմին, ապա դրա առաջին ցայտուն արտահայտությունը մեր նոր գրականության մեջ Տերտերյանը համարում էր Արուսյանի ստեղծագործությունը և հատկապես «Վերք Հայաստանի» վեպը: Վերջինիս ազգային-հայրենասիրական ոգին հետագայում ժառանգեցին Գամառ Քաթիպան և մանավանդ Րաֆֆին, որին, ինչպես տեսանք, Տերտերյանը բընութագրում էր որպես հայկական ռոմանտիզմի բարձրակետ: Նրան են հետևել Մերենցը, Մուրացանը և Փափազյանը, որոնց ստեղծագործական մեթոդի ըմբռնման մեջ հստակություն մտցրեց Տերտերյանը, գիտականորեն ապացուցելով նրանց ռոմանտիզմը:

Վերջապես, Տերտերյանի, որպես գրականության պատմաբանի, արժանիքներից մեկն էլ այն է, որ անցյալի գրական երևույթները քննում ու գնահատում էր ներկայի գեղարվեստական պահանջների տեսանկյունից, առանց սակայն անցյալի կոպիտ մոդեռնիզացիայի: Այլ կերպ ասած՝ նա երբեք չէր դառնում փաստագիր և ոչ էլ սոսկ գիտական օրինաչափություններ որոնող կաբինետային գիտնական, այլ խոսում էր որպես արդիական կյանքով ապրող ակտիվ քաղաքացի, որն անցյալի արժեքները ի սպաս էր դնում ներկային: Նրա համար մեր դասական ժառանգությունը, անցյալի հայ գրականության լավագույն դեմքերն ու հուշարձանները այսօր էլ ապրում ու մասնակցում են մեր հոգևոր կյանքի զարգացմանը: Այդ բանը ժամանակին նկատել է Հր. Քոչարը, որը 1942 թ. ռազմաճակատում կարողալով Ալիշանին նվիրված Տերտերյանի ուսումնասիրությունը՝ հեղինակին գրել է. «Դուք ցույց եք տալիս երիտասարդությանը, թե ինչի համար են կռվել իրենց հայրերը և ինչ են երազել իրենց ժողովրդի մեծ որդիները և ցույց եք տալիս այնքան պարզ ու ճշմարտացի, այնքան բնական ձևով եք նկարում էպոխաների կապը, պատմական անալոգիաները այնքան հստակ տրամաբանությամբ եք գծում, որ

<sup>12</sup> Ա. Տերտերյան, Հայոց նոր գրականության պատմություն XIX—XX դ.դ.: Առաջադասություն, № 5 (13), Երևան, 1931, էջ 7:

թվում է, թե այսօրվա դեպքերին են արձագանքել մեր մեծ նախորդների ժամանակով մեզանից շատ առաջ»<sup>13</sup>:

Եվ արդարև, գրված լինելով արդիականության խոր զգացողությամբ, Տերտերյանի այդ և մյուս աշխատությունները, իր խոսքերով ասած՝ ունեցել են մի հիմնական նպատակ՝ «ցույց տալ հայ ժողովրդի, հայ գրականության լեհությունը և դրանով տոգորել ընթերցողին»<sup>14</sup>:

Այդ ազնիվ նպատակին հասնելու համար գրականության պատմաբանը միշտ և ամենուրեք ընդգծում էր մեր գրական շարժման սերտ կապը ժողովրդի պատմական ճակատագրի հետ: Նա ցույց էր տալիս, որ հայ նոր գրականությունն իր զարգացման բոլոր փուլերում հարազատորեն արտացոլել է ժողովրդական զանգվածների կյանքն ու պայքարը, նրանց ազատատենչ ճրգտումներն ու հայրենասիրական ոգին:

Մենք նշեցինք Տերտերյանի, որպես հայ գրականության պատմաբանի, գործունեության մի քանի կողմերը միայն: Բայց կարծում ենք այսքանն էլ բավական է պատկերացում կազմելու նրա գիտական լայն հարցասիրության և հետազոտական մտքի փայլատակումների մասին:

Իհարկե, այսօրվա բարձրությունից նայելով Տերտերյանի գրապատմական ժառանգությանը, կարելի է նշել թերություններ, վիճարկել նրա առանձին տեսակետներ, երբեմն նույնիսկ առարկել որոշ գնահատականների: Բայց սվլյալ դեպքում դա չէ էականը, այլ այն ծանրակշիռ ավանդը, որ ներդրել է նա հայ գրականության պատմության ուսումնասիրության մեջ:

Տերտերյանը հայ նոր գրականության պատմությունը դարձրեց իսկական գիտություն, ազատելով այն կամահաճ ու սուրյեկտիվ քննախոսությունից, — այս է, ահա, ամենասեղմ ձևով ասած՝ այն մեծ ծառայությունը, որ մատուցել է նա հայագիտությանը: Մի քանի տասնյակի հասնող նրա գրականագիտական լավագույն երկերը, որոնք տոգորված են հայրենասիրական ոգով, վաղուց դարձել են այդ պատմության ուսումնասիրության բարձրացող շենքի հիմնաքարեր:

**Г. А. САРКИСЯН — А. Тертерян как историк новой армянской литературы.** — Статья освещает деятельность выдающегося литературоведа, академика АН Армянской ССР Арсена Тертеряна (1882—1953), как историка новой армянской литературы. Автор показывает, что, начав свою литературоведческую деятельность еще в дореволюционное время, Тертерян стал признанным ученым в советские годы.

Именно с этого периода он читает лекции в Ереванском Государственном университете, приступает к созданию вузовского курса истории новой армянской литературы, выпускает ряд ценных трудов. Автор статьи обращает особое внимание на его труды «Новая армянская литература (Краткий курс)» (1922 г.), «История новой армянской литературы XIX—XX вв.» (1930—1931 гг.), равно как и стенограммы лекций (1938—1939 гг.), как характеризующие историко-литературную концепцию Тертеряна и подводящие итоги его научно-исследовательской работы.

<sup>13</sup> «Սովետական գրականություն», 1942, № 5—6, էջ 213:

<sup>14</sup> Ա. Տերտերյան, Հայ կյանքի երկեր, Երևան, 1944, էջ 4: